

891 71-31
5-80

Lucy

598

178

553

12009


0142

Լաւ
598

128. 553

20
ւր.

1010
40673



ՀԱՅԱՍՏԱՆԻՆ Ա.Ն.Պ.Բ.
№ 3.


ԻՆՁՈՎ ԵՆ ԱՊՐՈՒԿ ՄԱՐԴԻՎՏ

ՓՈՒՇԻՐՈՒԹԻՒՆ
ԿՈՄՍ Լ. ՏՈՒՍՏՈՅԻՑ.

2011

Մ Ո Ս Կ Ո Ւ Ա .

Типография С. О. Гервека, Чернышевский пер., д. № 5.
1885.



ԻՆՉՈՎ ԵՆ ԱՊՐՈՒՍ ՍԱՐԴԻԿ.

Մենք զիտենք որ մահիցը 'ի կեանք փոխուցանք. փան զի եղբայրներն սիրում էինք. բայց ով որ չէ սիրում եղբորը, մեռւմ է մահուան մէջ: (Յովհ. առաջին թ. ընդհ. Գ. 14):

Ով որ այս աշխարհքի ապրանքն ունենայ, և տեսնէ իր եղբայրը կարօտ մի բանի, և իր գումը փակէ նորանից, ինչպէս Աստուծոյ սէրը բնական կը լինի նորանում: (Գ. 17):

Որդեակներ, շփրենք խօսքով և ոչ էլ լեզուով, այլ գործով և ճշմարտութիւնով: (Գ. 18):

Սիրելիներ, իրար սիրենք, փան զի սերն Աստուածանից է. և ամէն ով որ սիրում է՝ Աստուածանից է ծնուած, և ճանաչում է Աստուած: (Գ. 7):

Կա որ չէ սիրում, Աստուծուն չէ ճանաչել. փան զի Աստուած սէր է: (Գ. 8):

Աստուած մեզանում է բնակում, և նորա սէրը կատարեալ է մեզանում: (Գ. 12):

Աստուած սէր է, և ով որ մեռւմ է սիրոյ մէջ, Աստուծոյ մէջ է բնակում, և Աստուած նորանում: (Գ. 16):

Եթէ մէկն ասէ, թէ սիրում եմ Աստուծուն և իւր եղբորն ասէ, նա ստախօս է. փան զի նա որ իր տեսած եղբորը չէ սիրում, Աստուծուն որ չէ տեսել ինչպէս կարող է սիրել: (Գ. 20):


I.



Մի գեղցու տան կենում էր իր կնկայ ու երեխանց հետ մի գերձիկ մարդ: Ըս գերձիկը ոչ

*) Աստուածաշունչ մատենան հին և նոր կտակարանաց (պարբրատեան բարբառով), 4. Պոլիս, տպարան Ա Յակոբ Պոյաձեան, 1883.

Дозволено цензурой. С.-Петербургъ, 4 Января 1885 года.



24 596
598-2009

Հող ունէր, ոչ տուն, ոչ էլ ուրիշ հարստութիւն. ամբողջ ընտանքին մէնակ իր ասղե աշխատանքովն էր կերակրում: Են տարին էլ նրա բաղդիցը հացի թանգ տարի էր—օրուայ աշխատածը օրն էլ ուտվում գնում էր: Հագներին էլ շոր չկար, իրանք էին— մի քուրք, էն էլ մաշուած, քրքրուած: Վերձիկը երկու տարի էր հա՛ ուզում էր մի նոր քուրք առնի, — փող չէր ընկնում ձեռք:

Եկան ձմեռուայ ցրտերն ընկան: Վերձիկը մտածեց որ մի երեքմանէթանոց կնկայ սնդկումը կայ պահած, մի հինգ մանէթ ու մի արասի էլ գեղցիք են տալու: Թէ էս ամէնը հաւաքեմ, ասեց, մի քուրք կ'առնեմ ու առաւօտը լուսացաւ թէ չէ, շուտ վեր կացաւ, կնկայ կուրակէն քցեց վրէն, վրէյն էլ չուխէն հաղաւ ու տանիցը դուրս եկաւ, գնաց պարտատէրերից մէկի մօտ: Պարտատէրը տանը չէր, կնիկն ասեց. «մի երկու օր էլ նպասի, — հիմի փող չունենք»: Վերձիկը գնաց մէկէլ պարտատիրոջ մօտ: Սա էլ երգում— կրակն ընկաւ թէ փող չունի: Վէս ընկաւ, դէն ընկաւ — մէնակ մի արասանոց դտաւ, տուեց դերձիկն ու ասեց. «էս դեռ վեր կալ չուխիս թեւը կարկատելուդ համար, էն մնացածն էլ — հոռոյ»: Վերձիկը մտածեց գնայ քուրքը նիսիայ վեր ունի: Վուրքըն էլ էնտեղ կողքին ընկաւ ¹⁾ ու ոչինչ չտուեց. «երբ որ փողը կը բերես, ասում է, էն ժամանակը քուրքն էլ կը տանես. թէ չէ — նիսիայ տուածը կ'որած է — քեզ անխող քուրք չենք կարայ տայ»:

1) Յամառութիւն արեց:

Էսպէս դերձիկը ոչինչ չկարաց անի. մէնակ մի հատ քսանկոպէկանոց ստացաւ ու մի գեղցուց էլ մի կարկատելու շալվար: Ճամբին դարդու մտաւ մի զինետուն, էն քսան կոպէկն էլ էնտեղ արագի տուեց ու դուրս եկաւ, առանց քրքի գնաց տուն: Գնում է ու ճամբին, մի ճիւղոտ կար ձեռին, նրանով էս սառցին է խփում, էն սառցին խփումս մէկէլ ձեռին էլ էն շալվարը խաղացնում ու ինքն իրան էսպէս խօսում:

«Ես քուրք չունեմ, չեմ էլ մրսում: Ինչու էլ պիտի մրսեմ, — էնքան արագ խմեցի, որ... թէկուզ ոչ մի ժամանակ էլ քուրք չունենամ, էլն ապք կը լինեմ, դարդերս էլ որ մոռացելեմ... Ար մէնակ ինձանով լինէր, հէնց մինչև վերջն էլ էսպէս կ'ապրէի: Համա կնիկս շլինքս կորտում է, նա չի կարայ... Տօ հէնց կնիկս էլ որ չլինէր, էլն դրանց երես տալ չի հարկաւոր. մարդ մի քիչ էլ թասիբ ¹⁾ պիտի ունենայ: Վու նրանց համար իշև պէս չարչարվում ես, չարչարվում, նրանք քեզ էսօր էդուց ասելով մասաների վրայ խաղացնում են ²⁾: Հիմիկուց դէնն էլ կը տեսնես, այ: Թէ դու մէկ էլ անխող կերեաս իմ աչքին, — գտակը վեր կ'ունեմ զլխիցդ, Մատուած վիայ, վեր կ'ունեմ: Բա դու ինչ տեղ ես գնում ինձ: Վասն կոպէկ է տալիս: Աս ի՞նչ անեմ քսան կոպէկը, ո՞ր մի ցաւիս տամ, դրանով ա՞նն կը պահուի... Աւ ինչով է արդարանում, — փող չունեմ: Վու որ չունես, — ես շատ ունեմ: Վու էլի ա՞նն ունես,

1) Պատուախնդրութիւն, անձնատիրութիւն: 2) Խարում են:

տաւար ունես, ամէն բան ունես: Եւ ի՞նչ ունեմ — էս եմ որ, այ, առաջիկ տկոր կանգնած եմ: Քո հացը կայեցդ է զալիս, համա ես առնովի հաց եմ ուտում: Հաբաթական երեք մանէթ հէնց մէնակ հացի եմ տալիս, ունես էլ, — պիտի առնես, չունես էլ, — պիտի առնես — հաց է, ուրիշ բան չէ որ առանց առնելու էլ եօրա գնացուի ¹⁾: Զիմի էս ըստէիս էլ տանս հաց չունեմ, էլի քչեցը մի մանէթուկէս հարկաւոր է: Վու էլ ինձ տալու ես, դէ տո՛ւր էլի»:

Դսպէս ինքն իրան խօսելով, դերձիկը կամաց-կամաց մօտենում է եկեղեցու պատին ու յանկարծ տեսնում որ Էստեղ պատի տակին մի սպիտակ բան է երևում: Մութն էլ նոր էր ընկել: Վերձիկը ինչքան մտիկ է անում, չի կարում ջոկի թէ ի՞նչ բան է: Թէ ասեմ քար է՞, — էստեղ էսպէս քար չկար: Անասուն ասեմ, — անասնի նման չէ: Վրէլսը մարդի գլխի նման է, համա մարդը էսքան սպիտակ չի լինի: Մարդը էստեղ ի՞նչ բան էլ պիտի ունենայ:

Վերձիկն էլի մօտ է գնում ու տեսնում, մի մարդ է, տկոր, պատին կպած, նստած, ոչ ժած է զալիս, ոչ մի բան անում — մեռածի պէս դունդուկածիկ է եկել, վեր ընկել: Վերձիկը զարգանդում է. «էս ի՞նչ պիտի լինի, Տէր Աստուած: Ո՞վ գիտէ, սպանուած մարդ է — շորահասն են արել ու էստեղ քցել: Թէ մօտ գնամ, վայ թէ զլուխս խաթի ²⁾ մէջ քցեմ: Զէ, չեմ մօտենայ»: Դսպէս մտածեց ու առեց կողքո՞նն անցկացաւ:

¹⁾ Կարելի լինի կառավարուել ²⁾ Փորձանք:

Երբ որ դերձիկը շուտ եկաւ եկեղեցու մէկէլ կողմը, Էս մարդը էլ չերեաց: Վերձիկը մի քիչ եկեղեցուցն հեռացաւ, ետ մտիկ արեց, տեսաւ որ մարդը էլ առաջուայ տեղումը չի, — մի քիչ պատիցը հեռացել է ու գլուխը դէս ու դէն է թեքում — կարծես մարդի է ման զպիս: Վերձիկ թուրք կպաւ ¹⁾, էլ չմտցաւ թէ ի՞նչ անի: Մին ուզում է մօտենայ, մին էլ վախում է որ վատ բան պատահի. «ո՞վ դիտէ, ի՞նչ մարդ է. թէ մօտենամ, ասում է, վայ թէ վրայ պըծնի ու ինձ բխխեղղ անի — էլ չեմ աղատուի ձեռիցը: Թէ չսեղդի էլ, մի բան էլս կ'օւղե ինձանից, — չէ՞ որ տկոր է: Ե՛, ես ի՞նչ տամ նրան, ես եմ էս հազիս մի ձեռք շորակտորը. էս էլ որ ձեռիցս առնի, ի՞նչ պիտի անեմ Էս ժամանակը: Տէր, դու աղատես փորձանքից»: Դս ասեց ու շուտ շուտ հեռացաւ: Եկեղեցուց մի քիչ անց էր կացել խիղճը տանջեց, էլ չկարաց առաջ գնայ, ճամփի կիսին կանգնեց:

«Դս ի՞նչ եմ անում, ինքն իրան ասեց նա, գժուե՞լ եմ, ի՞նչ է մարդը նեղութիւն ունի, մեռնում է, — ես չեմ էլ ուզում մօտենամ նրան: Հարստութիւնիցս եմ վախում, թէ... Օ, Միսճն, Միսճն, ի՞նչեր ես անում»:

Միսճնը ետ դառաւ Էս տկոր մարդի մօտ:

¹⁾ Գերձիկը վախեցաւ:





II.

Մօտ գնաց, տեսաւ. մի զուարթ, ջահէլ մարդ է՝
Ծեծուածի ոչ մի նշան չկայ վրէն. մէնակ էն
է, որ ցրտիցը կուշ է եկել ու էնպէս սա-
ւել, որ չի կարում զլուխը բարձրացնի որ
Սիմօնն տեսնի: Սիմօնը էլի մօտ գնաց. էն
ժամանակը մարդը ղնց որ թէ յանկարծ ուշի
գայ — զլուխը բարձրացրեց, աչքերը բաց արեց ու Սիմօնի
վրայ քցեց: Սիմօնի սիրտը էն բոպէին վկայեց որ սա լաւ
մարդ պիտի լինի: Չեռի շարվարը վէր դրեց, քամարը ետ
արեց, շարվարի վրայ դրեց ու չուխէն հանեց.

Եւ մի խօսայ, ասեց, դէ հաղիւր:

Սիմօնը նրա կանիցը բռնեց, տեղիցը բարձրացրեց: Մարդը
վեր կացաւ: Ենպէ՛ս մի նազուք, էնպէ՛ս մի խտտակ մար-
մին ունէր. ոչ ձեռն էր կտորուած, ոչ ոտը — ոչ մի, ոչ մի
տեղը արատուած չէր, դէմքն էլ մի շատ դիրեկան դէմք:
Սիմօնը չուխէն քցեց վրէն, տեսաւ չի հագնոււմ, — ինքը
նրա ձեռները մեկնեց, թեւերը անց կացրեց, փեշերը վրայ
բերեց ու քամարն էլ վրէն կապեց:

Սիմօնն ուզեց գտակն էլ նրա զլուխը դնի, համա տե-
սաւ որ ինքը ցրտին չի կարում դիմանայ ու մտածեց ինքն

իրան. «Իմ գլխին մազ չկայ, վէր է եկել. համա նրան եր-
կար խուճուճ մաղեր ունի, թող գտակս իմ գլխին մնայ,
աւելի լաւ է նրան էս շարվարը կրհագցնեմ»: Նստացրեց ու
ձեռի շարվարը հագցրեց սուներին:

— Դէ հիմի դու մի քեզ ժաժեժաժ տուր, աղբէր, որ
մի քիչ տաքանաս, էնդուց դէնը մնացածը — բանն Աստ-
ուած, լաւ կը լինի:

Հը՞, չի՞ կարում ման գաս:

Մարդը աչքերը քցել է Սիմօնին ու պելացած մտիկ
անուճ նրա երեսին. չի կարում թէ բան խօսայ:

— Հէր օրհասձ, ի՛նչ ես սուս կացել, հօ չպիտի՞ ձմեռն
էս քուչունն անց կացնես, տո՛ւն պիտի գնաս, չէ՛: Ե՛, հը՛.
փէտս վեր կար, կամաց-կամաց թինկ տալով գնանք:

Մի քիչ գնացին ու Սիմօնը սիսեց զանազան հարցեր տայ.

— Դու ո՞ւմնոնցից ես:

— Ես էստեղացի չեմ:

— Ես էլ եմ դիտում որ էստեղացի չես, թէ չէ ես քեզ
կը ճանաչէի: Հէնց դրա համար էլ ուզում եմ իմանամ թէ
ո՞րտեղացի ես, ինչո՞ւ էիր էնպէս պատի տակն ընկնել.

— Չեմ կարայ ասեմ:

— Չինի՞ անպատիւ են արել քեզ:

— Ինձ ոչով անպատիւ չի արել: Ինձ Աստուած է պա-
տիժ տուել:

— Մեռեւեմ Աստծուն, ի հարկէ ամէն բան Աստուա-
ծանկեց է: Համա էլ Հէնց, հօ պիտի քուչունը չմնայիր,
ո՞ւր էիր ուզում գնալ:

— Աւր որ գնացի, — ինձ համար մէկ էր:

Միմօնը զարմացաւ, տեսաւ որ կոպիտ մարդ չէ, քաղաքավարի է խօսում, համա չի ուզում իր մասին բան պատմի ու ինքն իրան էսպէս մտածեց. «Ի՞նչ չի պատահում աշխարհումս: Սա էլ մարդ է, կը լինի որ մի բան գիտէ, որ չի ուզում բացուի: Չեմ զօտի»:


Արբ որ հասան քուչի դուռը, Միմօնն ասեց.

— Ի՛չ ի՞նչ կանդնեցիր, դէ՛ մանկնք նեքսե — մի քիչ կրաքանաս էլա:

Միմօնի գինովութիւնը անց էր կացիլ, նա ցրտիցը սրբսրբթում էր: Նէնց որ մտան դրան շէմքը, մի քամի վեր կացաւ ու Միմօնի հագի կուրտիկի փէշը բարձրացրեց, տուեց նրա երեսովը: Ինչ ժամանակը յանկարծ Միմօնի միտն ընկաւ թէ ինչի՞ համար էր նա տանից դուրս եկել ու ինքն իրան մտածեց. «լաւ քուրք եմ ամուսնում կնկանս, գնացի քրքի, հիմի գալիս եմ առանց չուխի, էս հետիս տկորն էլ աւել: Եւ շանիս աչքը լուս»: Եւ շանին որ միտն էր քցում, տխրում էր: Նամա հէնց որ աչքն առնում էր էս օտար մարդին ու միտն էր ընկնում թէ ինչպէս նա ժամի պատի տակին աչքը քցեց Միմօնի երեսին, — սիրտը ուրախութիւնով լցվում էր:



III.



ուաւօտը գշերով Եւ շանը շուտ վեր էր կացիլ քուրսին ¹⁾ տաքացրիլ, ջուրը բերիլ պատրաստել, դրոնրեւրքը սրբոտել, երեսանցը վեր կացրիլ, հագցրիլ, երեսները լուացիլ, առաջները հաց դրիլ ու ինքը նստել միտք էր անում թէ ե՛րբ թխի հացը — էս օր թէ էգուց: Մալքումը ²⁾ երեք հաց էր մնացիլ մէնակ:

«Թէ Միմօնը հացը նրանց մօտ կերած լինի և իրիկունս էլ մի քիչ խնայողութիւն անի, քիչ ուտի, մտածում էր Եւ շանը — էգուցութիւն հացը հէրիք կ'անի»:

Մտածեց, մտածեց ու «օ՛՛՛ իման, ասեց, հարաք ³⁾ էս քան մտածեղուցս ի՞նչ պիտի դուրս գայ, մի բան որ աղիւրդ մէնակ մի թխելու է մնացիլ էս էլ մինչև ուրբաթ պիտի մեզ ելլա տանի, լաւ է էգուց թխեմ որ էսօրուայ ուտելուն մնայ, — հոոյ չպակսի»:

1) քուրսին մի հաւատարակցին, քառանկունի ցած ոտներով սեղան է որ գնում են տան մէջ տեղումը կամ թնրի կամ կրակարանի վայ, երբ բոցը նստում է, ծածկում են վերմակով կամ կապերտով և ոտները տակն արած նստում տաքանում են:

2) Հաց դարսելու տեղ:

3) Արդեօք:

Շուշանը տեղեցը վեր կացաւ, երեխանց առաջիցը հացը հաւաքեց, կարկատանի բոխչէն ¹⁾ առաջը դրեց ու սիսեց մարդի շապիկը կարկատելը: Մարկատում է ու ինքն իրան մտածում թէ ինչպէս պիտի մարդը քուրք առնի:

«Չիմաքի նրան քուրքչին. շատ միամիտ է Միմօնս, ինչ ասում են հաւատում է: Եստճու գառն է, երեխէն էլ կը խաբի նրան: Աւթ մանէթը քիչ փող չի. էդ փողովը լաւ քուրք կ'առնուի: Չեմ ասում խաար — խասն ի՞նչ ենք անում մենք. մերն էն է, որ մի տաք քուրք լինի, որ կարենանք դուրս ու տուն անենք, պրծաւ գնաց: Թէ չէ էն ի՞նչ էր մեր օրը հերու ձմեռ. ոչ ջրի էի կարում գնաց, ոչ մի տեղ: Զէնց հիմի ի՞նչ է, հը. ինչ ունէի չունէի, էն էլ նա հաղաւ գնաց. Եստուած ոչ անի որ հիմի մի բան պատահի ու դուռը գնալու լինեմ, էն ժամանակը չեմ իմանում թէ ի՞նչ պիտի անեմ: Ես ինչու էսքան ուշացաւ, քա՛ն: Զիմի վաղուց պիտի եկած լինէր: Այլ դիտէ էլի քէֆով է ընկել իմ տատրակս»:

Ես խօսքերի վրայ Շուշանը դրան ետեւում ոտի ձէն լսեց: Ետեղը խրեց կարին ու դուրս թռաւ հաշտը ²⁾, տեսաւ Միմօնն է, հեան էլ մի զլխաբաց ու մաշուած շալվարը հագին գեղցի:

Ինչ բոպէին Շուշանը գինու հոտ առաւ ու ինքն իրան մտածեց. «որ ասում էի քէֆով ընկած կը լինի»: Ետոյ որ չտեսաւ թէ մարդի չուխէն հաղին չի, ձեռն էլ դարդակ է

1) Կապոյ: 2) Կոխտանակ:

ու ինքն էլ բան չի ասում, — ոնց որ թէ պղնձով սաոր ջուր շուռ տուին զլխին — հապէս կարծեց թէ Միմօնը փողերը տարել է արաղի է տուել էն մարդի հետ խմել ու դարդակ տուն եկել, նրան էլ հետը քցել բերել: Զամա լեզուն աստաի տակոյն արեց — բան չխօսեց:

Սուս ու փուս նրանց նեքսե արեց, ինքն էլ ետեներիցը մտաւ, տեսաւ որ Միմօնի հետի մարդը մի անձանաչ, ջահէ, լղար ղքմին է, հագինն էլ իրանց չուխէն է: Չուխի տակին էլ ոչ արխալուղ կայ, ոչ շապիկ, ոչ էլ զլխին դրտակ: Մտել է նեքսե, մի տեղ սառած կանգնել, աչքերը քցել գեանին ու ոչովի վրայ մտիկ չի անում: Շուշանը վախեցաւ, կարծեց լաւ մարդ չի: Վոթերը կիտեց ¹⁾ ու քիթը կախ գնաց պատի տակին նստեց որ տեսնի թէ վերջն ի՞նչ է լինելու:

Միմօնը գտակը վեր կալաւ, պատին կախ արեց ու էն մարդի ձեռիցը բռնեց տարաւ քուրսու տակին նստացրեց, ինքն էլ կողքին ուրախ ուրախ նստեց ու կնկանն ասեց.

«Շուշան, ի՞նչ ունենք իրիկունս ուտելու. բեր տեսնենք»:

Շուշանը քթի տակին չեմ զիտում ի՞նչ ասեց ու լուց: Մա տեղիցը չէր ետում ու աչքերը կամ իր մարդի վրայ էր ողորում, կամ էն մարդի ու մի կողմիցն էլ ինքն իրան թոնթորում ²⁾: Միմօնը տեսաւ որ կնկայ քէֆը տեղը չի, համա, ի՞նչ արած, իրան էն տեղը դրեց թէ չի տեսնում ու էլի հարցրեց.

1) Բարկութեան նշան: 2) Տփղոսութեամբ խօսում քթի տակին:

— **ՀԸ՛**, զլինի՞ թէ էսօրութիւն բան չես եկիւր:
 — **Եփել** եմ, համա քեզ համար չի: **Վու** քու խելքը
 զինու հետ ես ասնիլ տուել: քուրքն ի՞նչ էլաւ, չուխէզ
 ինչու ես էզ մթռուբին ¹⁾ տուել, դա քո ընկերն է: **ԶԷ՛**,
 ես ձեզ նման զինախումբներին հաց չեմ սայ, որ ուտէք:
 — **Շուշան** ջան, ինչու ես վատ բաց անում բերանդ:
Սոաջ մի իմացիր թէ ի՞նչ մարդ է, ետոյ...
 — **Փողերն** ի՞նչ արիր, ես էզ եմ ուզում իմանալ:
Սիմօնը ձեռք տարաւ ջէբը, ծալած կրեքմանն թանոցը
 հանեց, բաց արեց ու.
 — **ՄԵ՛**, ասեց, հրէս: **Սպրոյիցն** էլ չկարեցայ առնել, —
 ասեց մի կրկու օր էլ սպասիր:
Շուշանն աւելի կատաղեց. էն քիչ էր, որ մարդը քուրք
 չէր բերել, վերջն չուխէն էլ ով է զխտում ի՞նչ մարդի էր
 տուել, դեռ հեան էլ տուն բերել: **Վրայ** պրծաւ, քուր-
 սու վրիցը էն թուղթ փողը յարեց ²⁾, տարաւ պա-
 հեց ու եկաւ ձէնը քցեց գլուխը:
 — **Չունեմ**, ես հաց չունեմ, որ զուր տեղը տամ ձեզ
 զինախումբներ:
 — **ՄԵ՛**, անտուժես, **Շուշան**, որ դու լաւ չես անում:
Ինչու չես լեղուդ քեզ քաշում: **Սոաջ** իմացիր թէ ի՞նչ
 են ասում քեզ...
 — **Ո՛ւմից** իմանամ, ձեզ նման զինախումբներից...
 բախտաւոր ձեր գլխին: **Սխար** զուր չէր, որ չէի ուզում

1) Գատարկաշքեկ, մերացկան, բոշայ: 2) Խեց:

քեզ առնեմ, է՛: **Սխար** ես զիտէի որ լակում ես շան փայր,
 է՛: **Ո՛ւր** է, ի՞նչ ես արել էն հերանցս տանից բերածս
 բարձի կրեսները — **Ճ՞** որ զինու ես տուել, լակել: **Հիմի**
 էլ էլի լակած ես տուն ընկել:

Սիմօնն ուզում էր ասի որ մէնակ քսան կողէկ է զինու
 տուել, ուզում էր պատմի թէ էզ մարդին նրաեզ գաւա, —
Շուշանը նրան լեղուակոխ էր անում, չէր թողում թէ
 կրկու խօսք էլ մարդն ասի. ի՞նչ որ էն զլեիցը դրանց
 զլուխն էր եկել, — միմին առաջն էր բերում ու հին դար-
 մանը քամու տալիս:

Սեկց, ասեց **Շուշանս**, սրտի չարութիւնիցը փրփրաց,
 փրփրաց ու յանկարծ վեր թռաւ տեղիցն ու վրայ պր-
 ծաւ **Սիմօնի** վրայ. թեիցը բռնեց ու.

« **Տուր**, ասեց, շուտ արա, հանիր իմ կուրակէն. որ թո-
 դան էզ է մնում, էզ էլ կ'տանես կ'ուտես, շուն ա՛նպիտան »:

Սիմօնը կուրակի մի թեք հանեց, մէկէն էլ հանում
 էր, ու էզ րոպէին կնիկը էնպէս ուժով ձգեց, որ թեք
 պոկուեց: **Շուշանը** կուրակէն քցեց վրէն ու ետաւ ¹⁾ դէպի
 դուռը: **Համա** շնքումը յանկարծ կանգնեց. չէր իմանում
 ինչպէս անի. համ ուզում էր դուրս գնայ սիրտը հանգս-
 տացնի, համ էլ ուզում էր իմանայ թէ էզ ի՞նչ մարդ էր,
 որ դրանց տունն էր եկել:

1) Ուղղակի վազեց:





IV.

անդնել էր ու հապէս խօսում.
— Թէ դա վատ մարդ չի, ի՛նչու է էդ-
պէս տիրոյ. ախար շապիկ էլ չկայ անով քանդուածի հա-
զին: Թէ լաւ մարդ է, բա ինչո՞ւ չես ասում թէ որ տեղեց
ճանկեցիր էդ թաքառուկին ¹⁾:

— Ես էլ քեզ ասում եմ որ ժամի դռնովն անց էի կե-
նում, տեսայ, սա հստեղ պատի տակին տիրոյ նստած էր,
ցրտեցը կուչ էր եկել ու ստուռ. որ մի քիչ էլ ետի էի
հասել — մարդը պիտի ձեռաց գնար: Եստուած ողորմաց
որ ես տեսայ: Տեսայ ու մտաք արի. «ո՞վ գիտէ, ասեցի,
ի՛նչ նեղութիւն ունի որ էս օրին հստեղ վեր է ընկել էս
ցրտումը»: Վեր կալայ, հագցրի ու բերի տուն: Հիմի
դո՞ւ ասա. վաճա՞ք եմ արել թէ փնտ՞ս, որ էդպէս չարա-
նում ես: Վէ արի բարձր ²⁾ ու ուրիշ անգամ էլ էդպէս
չարանաս — մեղք է:

Շուշանը չէր հանդարտում, էլի ուզեց բերանը բաց
անի, համա էն լոպէին մտիկ արեց էն մարդին ու սուս
կացաւ: Են մարդը ոնց որ նստել էր, հնպէս էլ նստած
մնացել էր, ժած չէր գալիս. ձեռները դրել էր ծնկներին,

1) Հարուստ (հեղուկան մարդ): 2) Հաշտուր:

զոււիք քաշ էր քցել ու ձէնը կտրած լուճ էր էս բոլորը:
Երեսիցն երեսում էր որ սիրտը նեղանում է Շուշանի
խօսքերիցը: Շուշանը ձէնը կտրեց, էդ ժամանակը Միսօնը
վեր կալաւ, ասեց.

— Շուշան, բա դու Եստուած չունե՞ս:

Ես խօսքի վրայ Շուշանը աչքը քցեց էն մարդին, ու
էն լոպէին սիրտը հանդարտեց: Են ժամանակը տեղեցը վեր
կացաւ, սուս ու փուս մտեցաւ օջաղին, պղնձի խուփը
վեր կալաւ վրեցը, երկու աման սպախաշու ածեց, դրեց
սինու վրայ, հացը, աղը ու դդաշներն էլ հետը տարաւ
դրեց քուրսու վրայ առաջները:

— Ենուշ արէք, ասեց Միսօնը ու սինին քաշեց բնկօր
առաջը:

— Համեցէք, համեցէք:

Չոր հացը բրդեցին ամաններն ու սկսեցին ուտել: Եդ
ժամանակը Շուշանը քուրսուն թիկը տուած նստել էր ու
մտիկ էր անում թէ ինչպէս է էն մարդը հաց ուտում: Մտիկ
արեց, մտիկ արեց ու վերջը խեղճն էկաւ էդ մարդի վրայ: Են
ժամանակը մարդը յանկարծ ուրախացաւ, երեսի ամպերը
եւ դնացին. նա մտիկ արեց Շուշանին ու ժպտաց:

Սերան, պրծան, Շուշանը սինին տարաւ թարեքը ¹⁾
դրեց ու եկաւ էն մարդիցը զանազան բաներ հարցրեց:

— Դէ մի ասա. դու ո՞ւմնոնցից ես ախար է՞:

— Ես հստեղացի չեմ:

1) ПОЛКА.

— Բա քուչումն ի՞նչ բան ունեիր:
 — Չեմ կարայ ասեմ: Լէն Աստծու պատիժն էր եկել վրէս:
 — Հէնց տիւի տկը՞ր էիր, ոչինչ չկա՞ր հագիր:
 — Տիւի տկըր: Լչնեց էլ ցո՛ւրս էր: Փէտացել էի: Լաւ էր, Սիմօնը տեսաւ ինձ, մեղք եկաւ, իր չուխէն հանեց, հազցրեց ինձ ու բերեց տուն: Եստեղ էլ դու մեղք եկար, հաց տուիր, ջուր տուիր, կշտացրիր: Աստուած օջաղներդ շէն պահի, ձեր որդիքն ապրեն, Քրիստոսի աջն ու խաչը միշտ էս տան վրայ լինի...
 Եւ շանը վեր կացաւ, մեւթաքի վրիցը մարդի կարկա-
 տած շապիկը վեր կալաւ, տուեց էն մարդին, մի ջուխտ,
 զիւլպայ էլ գտաւ, էն էլ տուեց ու ասեց.

— Եւ, տեսնում եմ շապիկ չունես հագիր, հագիր ու պարկիր հանդատացիր: Ուզում ես, — էստեղ քուրսու տա-
 կին պարկիր. չես ուզում, — էստեղ դոշակի վրայ պարկիր:
 Ոնց քէ՛թդ ուզում է, էնպէս արա՛: Եւ շանը դուրս գնաց,
 որ նա շապիկը փոխի:

Ինչ ժամանակը մարդը չուխէն հանեց, շապիկը հագաւ
 ու գնաց դոշակի վրայ պարկեց: Եւ շանը ներսե մտաւ,
 ճրագը հանդցրեց, գնաց իր մարդի կողքը մտաւ ու լըհէր¹⁾
 տուար վրէն քաշեց: Պարկիկ է ու չի կարում քնի. մըտ-
 քիցը խկի չի հեռանում էն մարդը:

Հէնց որ միտն է ընկնում որ բոլոր հացը կերուեց ու
 էզուցութիւն էլ ոչինչ չմնաց, հէնց որ միտն է ընկնում

1) Վերմակ:

որ շապիկն ու զիւլպէքը տուեց էն մարդին, — տխրում է:
 Համա հէնց որ միտն է ընկնում թէ ի՞նչպէս էն մարդը
 ժպտաց, — սիրտը ուրախութիւնով լըվում է:

Երկար ժամանակ Եւ շանի քունը շատրաւ: Սիմօնի
 քունն էլ չէր տանում ու հա՛ լըհէրի տուար իրան կողմն
 էր քաշում:

— Քա՛, ա՛յ քա՛:

— Յո՛ւմնն:

— Եխար էսոր էլսձ հացներս էլ կերանք. բաս էգուց
 ի՞նչ ենք անելու: Ելի քաւորանցից հօ չպտի՞ փոխ ուզենք:

— Ե՛հ, սաղ լինենք, կուշա էլ կը լինենք:

Կնիկը սուս կացաւ:

— Չէ՛, լաւ մարդ է երևում էդ մարդը, համա ափսոս
 որ իր մասին ոչինչ չի յայտնում:

— Որ կարենայ, կը յայտնի:

— Քա՛:

— Հը՛:

— Մէնք հօ ամէնքին տա՛լիս ենք, բա ինչո՞ւ ոչով էլ
 մեզ չի տալիս: Սիմօնը չէր իմանում ի՞նչ ասի. «էլի յի-
 մար յիմար դուրս տուիր», ասեց ու երեսը շուռ տուեց:

598-2009
 (1010 / 40633)



V.



ուսուտը լուսացաւ: Միմօնը զարթնեց: Լքի-
տէքը քնած էին: Անիկը գնացել էր հա-
րեաններից հաց փոխ առնելու: Երիկուսայ
մարդը հին գիւլպէքը հագին, շապկանց
նստել էր տեղումը ու օջորթի ¹⁾ գերաննե-
րին էր մտիկ տալիս:

« Եղբէր ջան, ասեց Միմօնը, ի՞նչ ես միտք
անում: փորդ հաց է ուզում, ջանդ էլ շոր:
Անրաս բան անես »:

— Ես ոչինչ չեմ կարաց անի:

Միմօնը զարմացաւ ու ասեց:

— Մարդ հաւէս ²⁾ ունենայ, թէ չէ ամէն բան կը սովորի:

— Ինչ որ ուրիշներն անեն, էն էլ ես կ'անեմ:

— Չի՞ լինի անունդ բաշխես ³⁾ ինձ:

— Պարբէր:

— Պարբէր աղբէր, դէ հիմի որ դու չես ուզում քո
մասին բան պատմես, ես չեմ զօտի քեզ — էդ քո բանն է:
Դու է՛ն ասա, որ քեզ բան տամ, կ'անես: Ես քեզ կ'ու-
տացնեմ, կը պահեմ:

1) Աւաստաղ 2) Սէր, ցանկութիւն: 3) Յայտնես:

— Աստուած քեզ բարի տայ, ես ուրախ կը լինեմ: Լէն է
որ դու մի անգամ ինձ ցոյց տաս, ետոյ ես ինքս կը սովորեմ:

Միմօնն ասեղը թիւեց, մի կտոր շոր վեր կալաւ ձեռք
ու սկսեց շուլարի:

— Տես, սովորիր. դժուար բան չի:

Պարբէրը մի քիչ մտիկ արեց ու ետոյ ինքն էլ մի ասեղ
վեր կալաւ, թիւեց, էն կտորն ուստի ձեռիցն առաւ ու
էնպէս լաւ շուլարեց, որ ուստի քէֆն եկաւ:

Ետոյ Միմօնը թագալակարն էլ ցոյց տուեց, դարձկարն
էլ ութուեւն էլ ձեւեւն էլ, ամէն բանն էլ: Ինչ որ ցոյց էր
տալիս, էն էր որ Պարբէրը մի անգամ տեսներ, — իսկոյն
սովորում էր — շատ շնորհքով սղայ էր: Երեք օրուսայ մէջ
էնպէս սովորեց, էն կար ու ձեւն էր անում, որ կ'ասէիր
տասը տարուսայ ուստայ լինի: Մինչև վերջը անդադար
բան էր անում ու քիչ էլ ուտում էր: Երբ որ էլ բանը
հասնում էր, սուս ու փուս տեղումը նստած, աչքերը քցում
էր երկինքն ու իր համար մտիկ անում օջորթի գերաննե-
րին: Իսկի քուչէն չէր դուրս դալիս, աւելորդ խօսք չէր
խօսում, հանաքներ չէր սիրում ու չէր էլ ծիծաղում —
միշտ ծանրը էր պահում իրան:

Պարբէրը ժպտաւ մէնակ մի անգամ էին տեսել, էն էլ
առաջի գշերը, հացի վրայ:





VI.

Օր օրի վրայ, շարաթ շարաթի վրայ անց-
կացաւ ու տարին եկաւ պտտուեց: Գար-
բէլը դեռ Սիմօնի մօտին էր: Սա էլի առաջուայ պէս լաւ
էր բանում: Գարբէլի համբաւը հասաւ ամէն տեղ, ամէնքն
էլ ասում էին որ ոչով էն իստակ ու պինդ կար ու ձեռ
չունի, ինչ որ Սիմօնի աշակերտ Գարբէլը: Արտեղ զեց որ-
տեղ գալիս էին Սիմօնի մօտ բան կարել տալու: Սիմօնի
հայն¹⁾ էլ կամաց — կամաց լաւանում էր:

Մէկ օր, ձմեռ էր, Սիմօնն ու Գարբէլը տանը նստած
բանում էին: Յանկարծ տեսան — մի կառք գնդգնդալով
էկաւ, մօտեցաւ իրանց դրանք: Մտիկ արին, տեսան կառքը
դրան առաջին կանգնեց, միջեցը մի աղայ մարդ դուրս ե-
կաւ ու մօտեցաւ տան դրանք: Շուշանը էն ըոպէին վեր
թռաւ տեղեցը ու գնաց դռներն երկուսն էլ շփեկալով բաց
արեց: Եղէն գլուխը կուացրեց, նեքսե մտաւ ու սենեակի
մէջտեղը կանգնեց: Սենեակի կէսը բռնեց ու քիչ էր մտում
գլուխը օջորքին կպէր:

Սիմօնը տեղեցը վեր կացաւ, աղէն գլուխ տուեց ու
մնաց զարմացած, նա իր օրումն էսպէս մարդ չէր տեսել:

1) Գրութիւն, վիճակ:

Ինքը Սիմօնը տաշեղ, Գագրէլը բարակ-մարակ, Շու-
շանը ոսկր: Համա սա ուրիշ աշխարհից կ'ասես լինէր, երե-
սը — կարմիր, կլոր, շլինքը — եղան շլինք, ինքն էլ... ի՞նչ
ասեմ. արջ տեսել էք, — այ էրպէս մի բան էր:

Էս մարդը ՖնչՖնչալով քուրքը հանեց, դազգեահէի²⁾.
վրայ նստեց ու ասեց.

— Ո՞վ է ձեր ուսուէն:

Սիմօնը թէ՛

— Էս եմ, աղայ:

Եղէն իր աղին ձէն տուեց.

— Ե՛յ աղայ, համբարձում, կապոցը բեր էստեղ: Եղէն կա-
պոցը առաւ, դազգեահէի վրայ դրեց ու հրամայեց ետ անեն:

Համբարձումը ետ արեց կապոցը: Միջինը մի սպիտակ
խաս կտոր էր:

Եղէն մատը անկեց կտորի վրայ ու ասեց.

— Լ սիր, ուստայ: Տեսնում ես ինչ կտոր է:

— Հրաման քեզ, աղայ, տեսնում եմ:

— Գու գիտում ես սա ի՞նչ կտոր է, թէ չէ:

Սիմօնը կտորը վեր կալաւ ձեռը:

— Գիտում եմ, աղայ, լաւ կտոր է:

— Բնաս, լաւ կտոր է, յիմմմմար: Էսպէս բան օրումդ
չես տեսած. Փրանդի ապրանք է, մէնակ էս կտորին վաթ-
տուն մանեթ եմ տուել:

Սիմօնի սիրտը մի քիչ ահ ընկաւ:

1) Գերձկի սեղան:

- Մենք զրտեղ պիտի տեսած լինենք, աղայ:
- Քառաս: Աստուծոյ սրանից ինձ համար արխալուղ կարես:
- Հրաման քեզ, աղայ, կարամ:

Աղէն գոռաց:

— Արարա, բնասս: Իմացիք թէ ո՞ւմ համար ես կարում ու ի՞նչ կտորից ես կարում: Ենպէս արխալուղ պիտի կարես, որ մի տարի հազնեմ, — ոչ քանդուի, ոչ ճղուի: Թէ կարաս, — կարի՛ր, թէ չէ՞, հէնց հիմիկուց ձեռ մի տայ: Տես, քեզ էլեւ ասում եմ. թէ որ մի տարումը արխալըիս մի տեղն ու տեղը քանդուել է կամ ճղուել, — քեզ բանդը դնել կը տամ: Թէ չե քանդուի, չե ճղուի, — քեզ տասը մանէթ ձեռնամոզդ ¹⁾:

Արմօնի սիրտը թրթռաց. չէր իմանում ինչ ասի: Մտիկ տուեց Պարբէլին, արմնկով կռանը խփեց ու ցածիկ ձէնով հարցրեց.

- Ը՞նչ ես ասում, վեր ունենք:
- Պարբէլը գլուխը ամբասցրեց. այսինքն թէ վեր կա՛ր:

Արմօնը վեր կալաւ ու խոստացաւ Էնենց արխալուղ կարի, որ մի տարումը ոչ մի տեղը ոչ ճղուի, ոչ էլ քանդուի:

Ինձ ժամանակը աղէն Համբարձումին կանչեց, տեղիցը վեր կացաւ, ձեռները մեկնեց, հրամայեց չուխէն հանի ու «ուստայ, ասեց, դէ չափսը բռնի՛ր»:

Արմօնը թեղը վեր կալաւ ու սկսեց չափել: Արկէնքը չափեց, թիկունքը չափեց, թևերը չափեց, ետոյ ուզեց որ

¹⁾ Վարձ:

մէջքն էլ չափի, — թեղը չհասաւ. լցրած բարդան ¹⁾ կասես լինէր տնով քանդուածը — շատ հաստ մարդ էր: «Շատ նեղ չեռնես, հա՛»: Արմօնը թեղի տախը մի ուրիշ թեղ էլ կապեց, ու Էն ժամանակը հազիւ հասաւ թեղը: Աղէն կանգնել էր ու Ֆնչացնում ու ներքի պոռոչն էլ ատամի տակին խաղացնում: Բոլորը զարմացած նրան Էն մտիկ տալիս: Յանկարծ աչքն ընկաւ Պարբէլին.

- Ի՞նչ տղայ է:
- Սա իմ լաւ ուստէն է, սա պիտի քո արխալուղը կարի:

— Իմացար ինչ ասեցի, ասեց աղէն Պարբէլին. պիտի Էնպէս արխալուղ կարես, որ մի տարի հազնեմ, — ոչ ճղուի, ոչ քանդուի: Արմօնը մտիկ արեց Պարբէլին, տեսաւ. Պարբէլը իսկի մտիկ էլ չե անում աղի վրայ, կ'ասես իրան հետ չեն խօսում, ու գլուխը քաշ սուս է կացել: Սուս կացաւ, սուս կացաւ ու յանկարծ ժպտաց: Ժպտաց ու լուսաւորուեց:

- Ի՞նչ ես սեպերդ ²⁾. բաց արել, դու պիտի Էնպէս կարես որ չուշանայ, ժամանակին հասնի, իման՞ում ես:
- Ար հասնի, չե ուշանայ:
- Քառաս:

Աղէն չուխէն հազաւ, բուրբը վռէն քցեց, միջին կողմուեց ու գուրս եկաւ: Մտիցն ընկաւ որ դրան մօտին գլուխը կռացնի ու ճակատը մի լաւ շրփպացրեց չէմքի փեփան:

Թաքեց զեանին, ուշուեց տուեց ³⁾, ճակատը բռնեց ու գուրս եկաւ զնաց իր կառքը մտաւ:

¹⁾ Մեծ պարկ: ²⁾ Ատամներէ համար է խօսքը: ³⁾ Հայհոյեց:

Ին ժամանակը Սիմօնը.

— Այքեզ զնդան¹⁾, ասեց. փէան էլ քեար չի անի դրան,
չմքի փէտը փոս ընկաւ, համա ճակատին ոչինչ չէլաւ:

Շուշանն էլ էն դհիցը թէ

— Մարդ էնպէս ապրուատ ունենայ ու էդպէս զնդան
չդառնայ: Եդ տեսակներին մահն էլ է վախում մօտենայ:

1) Գարնոցի սալ:



VII.

Հիմի Սիմօնը Գաբրէլին ինչ է ասում.

— Իս որ մենք վեր կալանք, Հիմի դէ տեսնենք ինչպէս ենք կարում, որ խաթի¹⁾ մէջ չընկնենք: Ապրանքը թանկ ապրանք, տէրը բարկացոտ մարդ, — վայ է, որ փչացրել ենք, էլ չենք ազատուի: Գէ վեր կալ, ձեւիւր քո աչքերը իմից սուր են, ձեռք էլ ինձանից լաւ է վրայ ընկի: Գու էդ արա, ես էլ էս շալվարը կը կարեմ կը վերջացնեմ:

Գաբրէլը չընդդիմացաւ. կտորը վեր կալաւ, փռեց դադգեահի վրայ, երկուտակ ծալեց, մկրտան առաւ ձեռն ու սկսեց ձեւել:

Շուշանը մօտեցաւ Գաբրէլին որ տեսնի ինչպէս է ձեւում: մտիկ արեց ու մտաց զարմացած. նա էլ էր դերձկու-թիւն սոփորել: Տեսաւ որ Գաբրէլը արխաղի նման չի ձեւում, — ամբողջ կտորը երկուտակ ծալել կտրել է, ու կողքերքն իրար է կարում: Մին ուղեց բան ասի, մին էլ միտք արեց. « Գաբրէլն ինձանից լաւ կ'իմանայ, կը լինի որ

1) Փորձանքի:

աղայ մարդկանց արխալուղը ուրիշ տեսակ են կարում: Չեմ խառնուի, թող ինչպէս գիտում է, քնպէս կարի»:

Գաբրէլը կարեց պրծաւ, ծաղեց ու էն կողմը դրեց: Աէս օրն ընկաւ, Սիմօնը տեղեցը վեր կացաւ, մտիկ արեց տեսաւ Գաբրէլը արխալուղ չե կարել, — պատան է կարել: Էն բոպէին արինը տուեց գլուխը, այ մարդ ասեց, էս ի՞նչ ես արել դու, քեզ պատան ասեցին կարիր, թէ արխալուղ: Հիմի որ էն մարդը գայ արխալուղը տանելու, մենք ի՞նչ պիտի ասենք նրան... էս լաւ բան չէլաւ... կտորիցն էլ ոչովի մօտ չե ճարուի... Ա՛խ, Գաբրէլ, ա՛խ, լաւ բան չարիր»:

Մի քիչ մնաց ու էլի ասեց.

— Ախար քեզ արխալուղ ասեցին կարիր, թէ պատան: Դու էս ի՞նչ բերիր իմ գլուխը... Մի բան ասա, է՛:

Լյս խօսքերի վրայ դուռը ծեծեցին: Լուսամուտից մտիկ արին, տեսան մի մարդ է — ձիուց վէր եկաւ, քաշեց, տա լաւ պատի տակին բըհրեցը ¹⁾ կապեց ու մօտեցաւ դրանը: Գուռը բաց արին, — էն ազի ծառան էր:

— Բարաջողո՛ւմ:

— Բարաջողո՛ւմ, Աստու բարին, խէ՛ր ըլի:

— Խանումն զրկեց, արխալղի համար:

— Արխալղի համար, ի՞նչ... .

— Ո՞նց թէ ինչ: Ել արխալուղ չե հարկաւոր, աղէս երկար չապրեց:

— Ի՞նչ ես ասում:

¹⁾ Ցեց:

— Բա՛ն: Չեր մօտիցը որ դուրս եկանք, դեռ տուն չհասած աղէս հողին տուեց: Հասանք տուն, եկան կառքիցը վէր բերելու, տեսան, քոթուկ է դառել վէր ընկել: Ի՞նչ հալա-հալուի ի՞նչ դաւի դառաբով ¹⁾ դուրս քաշեցինք տարանք նեքսե: Հիմի խանումն զրկել է որ ձեզ ասեմ, որ էլ արխալուղ չկարէք: Հիմի էլ պատան է հարկաւոր, — շուտ արէք, կարեցէք որ հետս տանեմ: Ինձ ասել են որ էստեղ մնամ, մինչև կարէք պրծնէք, որ հետս վեր ունեմ գնամ: Գ՛է՛ շուտ արէք»:

Գաբրէլը պատանը վեր կալաւ, կոյրեց ու թափ տալով տուեց աղին.

«Ա՛ռ, ասեց, դէ մի ուշանայ»:

Տղէն վեր կալաւ ու ասեց.

— Մնա՛ք բարին, Աստուած բաններիդ յաջողութիւն տայ:

Լյս ասեց ու դուրս գնաց:

¹⁾ Գծուարութիւնով:



VIII.



Մի տարի էլ անց կացաւ, երկու տարի էլ անց կացաւ—եկաւ դառաւ վեց տարի որ Պարբէլը ապրում էր Միմօնի մօտ: Նա առաջուայ պէս էլն ոչ մի տեղ չէր գնում, աւելորդ խօսք չէր խօսում ու էնքան ժամանակումը մէնակ երկու անգամ էր ժպտացել մի անգամ, երբ որ հաց էր ուտում՝ առաջի գշերը, մի անգամ էլ, երբ որ էն աղայ մարդը եկել էր Միմօնի մօտ արխալուղ կարել տալու: Միմօնն ուրախութիւնիցն էլ չէր իմանում թէ ի՞նչ անի, չէր էլ ուզում հարցնի թէ որտեղեց է եկել Պարբէլը — վախում էր հուշտ անի ¹⁾ մօտիցը փախցնի:

Մի անգամ նստած էին տանը: Անիկը օջաղովն էր խորտուած, երեխէքը դէս ու դէն էին վազվզում, դրան ձնին էին մօտիկ անում: Միմօնը մի լուսամուտի մօտ նստած կար էր անում, Պարբէլն էլ մէկէլ լուսամուտի մօտ չուխայ էր ձևում: Եւ ժամանակը երեխանցից մէկը մօտեցաւ Պարբէլին, ձեռք դրեց նրա ուսին ու իրան համար մօտիկ էր անում լուսամուտին: Մի քիչ մօտիկ արեց ու—**Ի՛իձա՛, ա-**

¹⁾ Խրանացնի:

տեց, տես էն ի՞նչ կնիկ է գալիս, կ'ատես մեր տունն է գալիս, հեան էլ երկու աղջկերք կան: Են մէկի ոտն էլ կաղ է:

Պարբէլը էն յոպէին բանը ձեռիցը վէր դրեց ու մօտիկ արեց լուսամուտին, երկար մօտիկ արեց: Միմօնը զարմացաւ ուրիշ ժամանակ Պարբէլը իսկի լուսամուտին չէր էլ մօտենում, — հիմի պոկ չէ գալիս էնտեղեց. էս ի՞նչ բան է տեսը: Ենքն էլ մօտիկ արեց, տեսաւ՝ զորդ որ մի կնիկ է գալիս, իստակ հագնուած, հեան էլ երկու աղջկերք, շալ աղլինները գլիններին: Են աղջկերքը էնքան իրար նման էին, որ չէիր կարաց մէկ մէկուց ջոկի մէնակ մէկի ոտը մի քիչ քնասուած էր — ման գալիս մի քիչ կաղում էր: Անիկը մօտեցաւ դրանը, դուռը բաց արեց, առաջ երեխանցը ներսե արեց, հոդը ինքը մտաւ ու ասեց.

- Բարաջողում ձեզ
- Բարով, Աստու բարին: Ի՞նչ կայ:
- Անիկը նստեց, աղջկերքը վախլու-թիւնիցն եկան մտան զորդ ու կպան կրճքիցը:
- Եկել եմ էս երեխանց համար դարնբու-թիւն շորեր կարել տամ:
- Ի՞նչ կը լինի, կը կարնք ինչ կտորեց որ կ'ուզես:
- Միմօնը մօտիկ տուեց Պարբէլին, տեսաւ որ Պարբէլը բանը թողել է ու աչքը քցել աղջկերանց վրայ ու պէլ պէլ մօտիկ անում:

Միմօնը շատ զարմացաւ: Աղջկերքն էլ լաւ աղջկերք էին. սև սև աչքերով, թխլիկ, կարմրաերես ու նախշուն աղլինները գլիններին: Համա Միմօնը էլն չէր հասկանուս

Թէ Գարրէին ինչու է հնպէս երկար մտիկ անում նրանց երեսին, ու մնացել էր զարմացած:

Անիկը երեխանցը կանգնացրեց, Միմօնը նրանց չափար բռնեց: Բռնեց պրծաւ, ետոյ դարձաւ կնիանը հարցրեց.

— Ինչու է էս երեխէն կաղում, մօրուց հօ չե՞:

— Չէ, յետոյ է պատահել մի անգամ սրանց մէրը գլորվում է ընկնում սրա ոտին ու ոտը հսպէս ծռվում:

Շուշանն առաջ էկաւ, որ իմանայ թէ ում կնիին է՝ ում երեխէքն են ու հարցնում է.

— Ինչու որ, դրանք քո երեխէքը չե՞ն:

— Չէ, սրանք ուրիշի երեխէք են, ես սրանց ոչ մէրն եմ, ոչ ազգականը. ես մէնակ վեր եմ կալել սրանց ինձ մօտ պահելու:

— Բա որ քունտնքը չեն, ո՞նց ես էգպէս սիրում դրանց:

— Ո՞նց չսիրեմ. էս երկսին էլ իմ ծծի կաթովն եմ պահել մեծացրել: Աս մէնակ մի երեխայ ունէի, համա նրանց էն քան չէի մեղք գալիս, ինչքան սրանց

— Բա ում երեխէքն են որ:

Անիկը սկսեց մէկ—մէկ պատմել էն բոլորը, ինչ որ ծնուած օրիցը եկել էր էս երեխանց գլուխը:



IX.



«Վեց տարի կը լինի, ասեց, որ էս բանը սրանց գլուխն է եկել: Մի շաբթուայ մէջ համ հէրները մեռաւ, համ մէրները. երեքշաբթի հօրը թաղեցին, ուրբաթ օրն էլ մէրը մեռաւ: Խեղճ հէրը երեխանց երեսն էլ չտեսաւ. սրանք նրա մեռնելուց երեք օրից ետը ծնուեցին: Մէրն էլ, վայ նրա մեղքին, սրանց բերեց, ու մի օրից ետը ինքն էլ մարդի մօտ գնաց: Եդ ժամանակը ես ու մարդս դրանց կողքին հարեաններ էինք: Սրանց հէրը մէնակ մարդ էր. առաւօտները գնում էր անտառը, բանում, իրիկները գալիս տուն: Մէկ օր, ո՞նց է լինում, ծառը քցում են վրէն, — ընկնում է փորին ու փորը ջնջվում: Հէնց տուն են հասցնում թէ չէ, հողին տալիս է: Եդ շաբթին էլ կնիկը պարկում է ու էս աղջկերանցը բերում: Եդ ժամանակը ոչով չէ լինում մօտին, որ մտիկ տայ, — ոչ մի աղջիկ, ոչ մի պառաւ. խեղճ աղքատ ծննդկանն է լինում տանը մէնակ վեր ընկած:

«Մէնակ աղատվում է, մէնակ էլ մեռնում:

«Մռաւօտը գնացի հարեանիս ակը տալու. մտայ ներսէ, տեսայ, ողորմելին փէտացել է: Մեռնելիս էլ գլորուել էր, ընկել էս աղջկայ վրայ ու հսպէս ոտը վնասել: Են ժամանակը

Հարեանները մօտ էլան, լողացրին, փաթաթեցին, դադաղ բերին, դրին մէջը ու տարան թաղեցին: Աստուած նրանց բարի տայ, լաւ մարդիկ էին: Էս աղջկերքը մնացին որբ ու անտէրուտիրական. ուր տանես, ում տաս — մնացել էինք շուարած: Անանքանցից էլ մէնակ ես ծիծ ունէի, էս Հարեաններս եկան կպան ետխէս 1) թէ՛ պիտի էս երեխանցը վեր ունես, պահես, մինչև տեսնենք ի՞նչ ենք անում: Ես էլ ի՞նչ արած, պիտի վեր ունէի: Առաջ մէնակ էս մէկին էի ծիծ տալիս, էս կաղին չէի տալիս — նրանից յոյս չունէի որ ապրի: Մէկ էլ ինձնուհի՜ միտք արի, որ անծիծ թողալ չի կարելի — մեզք է ու նրան էլ սկսեցի ծիծ տալ: Մէկը իմն էր, երկու էլ սրանք, — դառան երեք: Նրեքին էլ իմ ծծովն էի պահում, ինքս էլ ջահէլ էի, Աստուած էլ ծծերիս կաթը հնքան շատ էր տուել, որ շատ անգամ աւելորդ էր լինում — կթում էի: Էնկնց պատահում էր, որ մի անգամից երեքն էլ իրաս հետ ծիծ էին ուզում. էս ժամանակը մի ծիծս մէկի բերանն էի դնում, մի ծիծս մէկէլի ու հնքան կենում էի, որ մէկն ու մէկը կշտանայ ետ քաշուի. հէնց ետ էր քաշվում թէ չէ, էս երբորդին էի առնում խտիտ: Համա Աստուած, մեռնում՝ Նրա սուրբ կամքին, հնպէս բերեց, որ իմն երկու տարեկան դառաւ ու մեռաւ, մնացին էս երկուսը: Նրանից ետք էլ երեխայ չեմ բերել — մէնակ էս մէկն էր, որ մեռաւ: Ամաց — կամաց Հալներս էլ լաւացաւ, երկու շահու տէր դառանք: Հիմի մարդս իրան ու գեօրս 2) աշխատանք ունի.

1) Խնդրեցին: 2) Իւր չափով:

մի Հարուստ մարդի մօտ ծառայում է: Որ էս աղջկերքն էլ չլինէին, — ետրաբ 1) ի՞նչ պիտի անէինք առանց երեխայ: Սրանք իմ ճրագն են, իմ աչքի լուսն են, ո՞նց չսիրեմ ես սրանց »:

Էս խօսքերն ասեց ու էն կաղ աղջկայ աչքերը պաչեց, մէկէլի երեսիցն էլ արտասուքի կաթիլները սրբեց:

Շուշանը Հոգոց քաշեց ու ասեց.

— Օ ուր չին ասել «առանց մօր կարելի է ապրել, Համա առանց Աստծու չի կարելի »:

Արանք էսպէս խօսում էին ու յանկարծ տեսան որ տունը լուսաւորուեց: Լուսը Գաբրէլի կողմիցն էր դալիս: Ամէնքը մտիկ տուին Գաբրէլին, տեսան որ նա իր տեղը նստած ձեռները դրել է ճնխներին, աչքերը քցել է վերև ու ժպտումէ:

1) Արդեօք:





X.

Կնիկը վեր կացաւ, երեխանցը վեր կալաւ ու դուրս գնաց: Նրա ետեւիցը Պարբէլն էլ իր տեղիցը վեր կացաւ, բանը ձեռիցը վեր դրեց, գնաց կանգնեց Սիմօնի ու կնկայ առաջին, դուրս տուեց ու ասեց.

— Արեւիցէք ինձ պարտնէր: Աստուած ինձ ներեց, դուք էլ պիտի ներէք: Ինչ ժամանակը տեսան որ Պարբէլիցը լուս է դուրս գալիս: Սիմօնը տեղիցը վեր կացաւ, Պարբէլին դուրս տուեց ու ասեց.

— Պարբէլ, ես տեսնում եմ որ դու Հասարակ մարդ չես ու էլ չեմ կարայ քեզ իմ մօտին պահեմ, ոչ էլ կարամ քեզանից շատ բաներ հարցնեմ: Համա մի բան պիտի ինձ ասես. էն ժամանակը, որ ես քեզ առաջին անգամը ժամի պատի տակին տեսայ ու տուն բերի, դու շատ տխուր էիր, — էդ ինչիցն էր: Ա՜տոյ, երբ որ եկանք տուն, կնիկս Հաց բերեց առաջներս, ուտելիս դու ժպտացիր ու լուսաւորեցիր, — էդ ի՞նչիցն էր: Մէկ էլ երբ որ էն աղէն, միտդ է, եկել էր արխալուզ կարել տալու, դու էլ ժպտացիր ու աւելի լուսաւորուեցիր, — էդ ի՞նչիցն էր: Հիմի էլ, երբ որ էն կնիկը երեխանց հետ էս տեղ էր, էլ ժպտացիր ու բոլորովին լուսաւորուեցիր, — էս ի՞նչիցն էր: Ասա տեսնեմ, Պարբէլ, էդ ինչո՞ւ է քեզանից եզպէս լուս դուրս գալիս ու էն ինչո՞ւ երեք անգամ էնպէս ժպտացիր:

Ինչ ժամանակը Պարբէլն ասեց.

— Ինձանից էնպէս լուս դուրս գալը նրանից էր, որ ինձ Աստուած պատժել էր, Համա Հիմի ներեց, երեք անգամ ժպտալս էլ նրանից էր, որ երեք բան պիտի իմանայի Աստուծուց, Հիմի իմացայ, մի բանն էն ժամանակն իմացայ, երբ որ կնիկդ ինձ խեղճ եկաւ ու Հաց տուեց, — դրա համար էլ ես առաջին անգամը ժպտացի: Մի բանն էլ էն ժամանակն իմացայ, երբ որ էն Հարուստ մարդը արխալուզ էր կարել տալիս, — դրա համար էլ ես երկրորդ անգամը ժպտացի: Պերջի բանն էլ էն ժամանակն իմացայ, երբ որ էն աղջկանցը տեսայ, — դրա համար էլ ես երրորդ անգամը ժպտացի:

Ինչ ժամանակը Սիմօնն ասեց.

— Պէ հիմի էլ ասա տեսնեմ ինչո՞ւ էր Աստուած քեզ պատժել ու էն ի՞նչ երեք բան էր որ դու Աստուծուց իմացար: Ասա որ ես էլ իմանամ:


Ինչ ժամանակը Պարբէլն ասեց.

— Աստուած ինձ նրա համար էր պատժել, որ ես Նրան չեսցի: Ասա առաջ երկնքու՞մը հրեշտակ էի, Աստուած ինձ զրկեց մի կնկայ հոգի տանելու: Աս երկնքիցը վեր եկայ երկիրը, տեսայ, մի կնիկ պարկել է, ջուտ աղջիկ է բերել ու հիւանդացել: Արեւիցէքը կողքին վէր էին ընկել ու նու՞ւմ¹⁾, Համա մերը չէր կարում նրանց բարձրացնի ծիծ տայ: Կնիկը որ ինձ տեսաւ, էն ըստէն Հասկացաւ որ եկել եմ հոգին առնելու, լաց էլաւ ու մղկտալով ասեց.

1) Լալիս էին:

«Հրեշտակ Մատնու, մէկէլ օրը մարդս ծառի տակովն էլաւ, մեռաւ, ոչ քեր ունեմ, ոչ մէր ունեմ, ոչ երեխանցս պահող ունեմ,—իմ հողին էլա մի առնի, որ ես էլա պահեմ—մեծացնեմ: Երեխէքը անհէր, անմէր չեն կարայ ապրի»: Ես ախանջ արի կնկանը, մի երեխուն տուի մօր ձեռը, մէկէլն էլ գրի կրճքին ու բարձրացայ երկինքը: Եկայ Տիրօջ մօտ ու ասեցի. «Ծննդկանի հողին չկարացի առնեմ. մարդը ծառի տակովն էր էլել մեռել, ինքն էլ ջուխտ էր բերել ու հիւանդ պարկել: Աղաչանք պաղատանքն ընկաւ որ հողին չառնեմ. [Թող ես էլա, ասեց, իմ երեխանցս պահեմ—մեծացնեմ: Երեխէքը անհէր, անմէր չեն կարայ ապրի»: Ես էլ չառայ ծննդկանի հողին: Ին ժամանակը Աստուած ասեց. «Կ'երթաս ու էն ծննդկանի հողին անպատճառ կ'առնես: Ին ժամանակը երեք բան կ'իմանաս. կ'իմանաս թէ մարդկանց միջին ի՛նչ կայ, կ'իմանաս թէ մարդիկն ի՛նչ չեն գիտում, կ'իմանաս թէ մարդիկն ինչով են ապրում: Երբ որ էս բոլորը կ'իմանաս, էն ժամանակն էլ կը դաս ինձ մօտ»: Ես վէր եկայ ներքե ու էն կնկայ հողին առայ:

Երեխէքը մօր վրիցը գլորուեցին ներքե: Մեռելը շուտ անցաւ ու մէկի ոտին դիպաւ ու դրանից էլ ոտը գուրս ընկաւ: Ես հողին վեր կալայ ու բարձրացայ. մի քիչ գեղեցը բարձրացել էի,— յանկարծ մի քամի վեր կացաւ, թեւերս թուլացաւ ու հողին ձեռիցս գուրս եկաւ մէնակ գնաց Աստծու մօտ: Ես էլ վեր ընկայ ներքե»:



XI.

Շուշանն ու Միմօնը հասկացան թէ ի՞նչ մարդի էին էնքան ժամանակ իրանց մօտ շոր տուել, հաց տուել, պահել, ահիցն ու ուրախութիւնիցը լաց էլան:

Ին ժամանակը Հրեշտակն ասեց.

— Մնացի մէնակ ու տկոր: Առաջ չէի իմանում թէ ցուրան ի՛նչ է, սովն ի՛նչ է: Համա որ մարդ դառայ, էն ժամանակը միտում էի, սոված էի ու չէի իմանում ի՛նչ անեմ: Տեսայ էստեղ Աստծու համար ժամ է շինած, մօտացայ որ Աստծու տանը փրկութիւն դանեմ,— դաները փակած էր: Ճարս կտրուած գնացի մտայ պատի տակը որ քամոցն էլա ազատուեմ: Երիկնապահն ընկաւ,— փորս վեց վեց էր անում, ցուրտը մօրթում էր թողում, ամէն տեղս փշաքաղվում ցաւում էր: Եդ ժամանակը յանկարծ տեսայ մի մարդ է գալիս, մի շարվար ձեռին բռնած ու ինքն իրան խօսելով: Եդ առաջին անգամն էր, որ ես մահկանացուի երես տեսայ. էդ երեսը զարհուրելի թուաց ինձ,— ես շուտ եկայ, որ նրան էլ չտեսնեմ: Ախանջ

դրի տեսայ, որ նա էլ է ցրտիցն ու սովածութիւնիցը գանդատվում ու ինձնուինձ ասեցի. «ես էստեղ սովեցն ու ցրտիցը ձեռաց գնացի, էս մարդն էլ հէնց նրա վրայ է խօսում թէ որտեղեց հաց ձարի, քուրք ձարի որ տանի կրնկանը, երկխանցը պահի,— սրանից ոչ մի օգնութիւն չեմ ստանայ»: Մարդն ինձ որ տեսաւ, նօթերը հաւաքեց ու աւելի զարհուրելի դառաւ ու սուեց կողքովս անցկացաւ: Ես բոլորովն յոյսս կարեցի: Մի քիչ մնացի, տեսայ մարդը էլի ետ է գալիս. մտիկ արի ու ջճանաչեցի թէ առաջուայ մարդն է— նա փոխուել էր. առաջին անգամը մեռլի դէմք ունէր, համա հիմի կենդանացել էր, ու էն ժամանակը ես իմացայ որ նրա մէջ Աստուած կայ: Նա մօտեցաւ ինձ, հագրեց, տեղեցս վեր կացրեց ու տարաւ իր տունը: Եկանք տուն, — կնիկը դուրս եկաւ ու սկսեց խօսել. նա իր մարդիցն աւելի զարհուրելի էր, բերնիցը մեռլի հոտ էր գալիս, ես չէի կարում եղ գարշահոտին գիմանամ: Նա ուզում էր ինձ տանիցը դուրս անի, համա ես զիտէի որ, եթէ դուրս անի, ինքը կը մեռնի: Եղ ժամանակը մարդը յանկարծ Աստուծուն կնկայ միտք քցեց, ու կնիկը էն բոպէին փոխուեց: Իրիկնահացի վրայ ես կնկայ երեսին մտիկ արի տեսայ որ էլ մեռելութիւն չէր երևում նրա երեսին. նա կենդանացել էր ու ես իմացայ որ նրա մէջ էլ Աստուած կայ:

Եղ ժամանակը միտս ընկաւ Աստուծու առաջի բանը. «կ'իմանաս թէ մարդկանց միջին ի՞նչ կայ» ու իմացայ որ մարդկանց միջին սէր կայ: Ես ուրախացայ որ Աստուած.

արդէն սկսեց իր խոստացած բաները ցոյց տալ ու առաջին անգամը ժպտացի: Ես մի բանն իմացայ. մնացել էր իմանամ. «մարդիկն ի՞նչ չեն գիտում ու մարդիկն ինչով են ապրում»:

Մի տարի էր որ ես ձեր մօտին էի, — մի մարդ եկաւ մի հնպէս արխալուղ կարել տարու, որ մի տարի հագնի, — ոչ ճղուի, ոչ քանդուի: Ես էղ ժամանակը նրա քամակին տեսայ իմ ընկեր հոգէառ հրեշտակներից մէկին ու հասկացայ որ արևը մէր չմտած էս մարդը պիտի մեռնի: Հրեշտակին մէնակ ես տեսայ, ուրիշները չտեսան: Են ժամանակը միտք արի. «էս մարդը մի տարուայ շոր է կարել տալիս ու չի գիտում որ մինչև իրիկուն չե ապրի»: Եղ ժամանակը միտս ընկաւ Աստուծու երկրորդ բանը. «կ'իմանաս թէ մարդիկն ի՞նչ չեն գիտում»:

«Մարդկանց միջին ի՞նչ կայ» — էղ իմացել էի: Հիմի էլ իմացայ թէ «մարդկանցն ի՞նչ է հարկաւոր իրանց անձի համար»: Են ժամանակը ես երկրորդ անգամը ժպտացի և ուրախացայ որ իմ ընկեր հրեշտակին տեսայ, ու որ Աստուած երկրորդ բանն էլ յայտնեց:


Համա դեռ ամէնը չէր. դեռ ես պիտի իմանայի. «մարդիկն ինչով են ապրում»: Չեղ մօտ ես բանում էի ու սպասում թէ երբ պիտի Աստուած իր վերջի բանն էլ յայտնի: Վեց տարուց ետը ձեզ մօտ մի կնիկ եկաւ երկու աղջկերանց հետ: Եղ աղջկերանցը տեսայ թէ չէ, էն բոպէին ճանաչեցի ու հասկացայ թէ ինչպէս են նրանք ապրել — մեծացել: Են ժամանակը միտք արի. սրանց մէրը ինձ աղա-

չում էր որ իր հողին չառնեմ, ես էլ նրան հաւատացի թէ անհէր, անմէր երեխէքը չեն ապրի, ու հողին չառայ: Զամա հիմի տեսնում եմ որ սրանց ուրիշ կնիկ է պահել — մեծացրել: Ու երբ որ էն կնիկը հնպէս թելիտում էր ¹⁾ էն օտար երեխանց վրայ ու հնպէս մղկտում, ես էն ըոպէին տեսայ որ նրա մէջ կենդանի Աստուած կայ ու իմացայ թէ ինչով են մարդիկն ապրում: Են ժամանակը հասկացայ որ Աստուած իր վերջի բանն էլ յայտնեց ու ինձ ներեց, ու ես երբորդ անգամը ժպտացի»:

1) Թելիտում էր, մղկտում էր-լալես, կոծում էր:



XII.



« Խօսքերի վրայ հրեշտակը մերկացաւ ու լուսը պատեց նրա մարմինը, հնպէս որ մարդի աչք էր ծակում վրէն մտիկ անելիս: Զրեշտակը բարձր բարձր խօսում էր ու կ'ատես ձէնը իրանից չէր, այլ երկնքիցն էր դալիս: Եդ ժամանակը նա ասեց.

Ես իմացայ որ ամէն մի մարդ ապրում է ոչ թէ նրանով, որ իր վրայ հողս է անում, այլ — սիրով:

Մէրը չէր գիտում. ի՞նչ է հարկաւոր իր երեխանցը: Զարուստը չէր գիտում. ի՞նչ է հարկաւոր իր համար: Եսպէս ոչով չգիտէ, արխալճըդ պէտք կը դայ իրան թէ պատանը:

Ես որ մարդ դառնալուցս ետը չմեռայ, էդ ոչ թէ նրանից էր որ միտք էի անում ինձ վրայ, այլ նրանից, որ էն ճամբորդ մարդի մէջ սէր կար, նրա կնկայ մէջ սէր կար — նրանք խեղճ եկան ինձ ու սիրեցին: Են որբ երեխէքը որ չմեռան, էդ ոչ թէ նրանից էր, որ նրանց վրայ միտք անող կար, այլ նրանից, որ օտար կնկայ սրտումը սէր կար, նա խեղճ եկաւ ու սիրեց նրանց: Եսպէս ամէն մարդ որ

ապրում է, էդ ոչ թէ նրանից է, որ նա իր վրայ հոգս է անում, այլ նրանից, որ մարդկանց մէջ սէր կայ:

Առաջ ես գիտէի որ Աստուած մարդկանցը կեանք է տուել և ուզում է որ նրանք ապրեն. հիմի էլ մի նոր բան իմացայ:

Ես իմացայ, որ Աստուած չի ուզեցել որ մարդիկն իրարից ջոկ ջոկ ապրեն. ետոյ նրանց չի յայտնել թէ ի՞նչ է հարկաւոր ամէն մէկին, այլ ուզեցել է որ ամէնը մէկ լինեն. վերջն էլ յայտնել է թէ բոլոր մարդկանցը ի՞նչ է հարկաւոր:

Ես հասկացայ որ մարդկանցը թուում է թէ իրանց վրայ հոգս անելով են ապրում, համա իսկապէս սերն է որ նրանց պահում է: Ով սէր ունի, նա Աստուած ունի ու Աստուած նրա մէջ է, պատճառ որ Աստուած սէր է:

Են ժամանակը հրեշտակը երգեց ու փառաբանեց Աստուծուն. նրա ձէնիցը տունը զրմբզրմբոցն ընկաւ, կտուրը ծակուեց ու մի հրեղէն սին բարձրացաւ զեանիցը մինչև երկինքը: Միմօնն ու կնիկը երեխանց հետ վէր ընկան երեսների վրայ: Հրեշտակի մէջքիցը թռեկը դուրս եկան ու հրեշտակը երկինքը բարձրացաւ:

Երբ որ Միմօնն ուշի եկաւ, տեսաւ որ տունը էլի առաջուայ տունն է ու իր մօտին մէնակ իր տանցիք են մնացել:



Ա Ղ Բ Ի Ի Ր

Պատկերազարդ միամտեայ հանդէսը (երեխաների և դաստիարակների համար) առաջիկայ 1885 թուականին կհրատարակվի միևնոյն զերբով, միևնոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ:

Տարեկան գինն է մի. 3 ռ., կիսամիսայ 2 ռ.:
Հասցէն. Կիւստո. Pedakuiu «ԱГПОРЪ».
Խմբագիր-հրատ. Տ. Նազարեան:

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը երկու անգամ Տարեկան գինն է 4 ռ. Կիւստոյում: Հասցէն. Կ. Պոլիս. Սուլթան Համամ, թիւ 14:

Հրատարակիչներ. Ն. Կ. Պէրպերեան և Ս. Տէօյլէթեան.

Մ Շ Ա Կ

Գրականական-բաղարական լրագիր: Տարեկան գինը 10 ռ.: Հասցէն. Կիւստո. Pedakuiu, «МШАКЪ»,
Խմբ.-հրատ. Գ. Արծրունի:

ԱՐՉԱԳԱՆՔ

Քաղաքական-գրականական շաբաթաթերթը Ներքին գործերի նախարարի կարգադրութեամբ «Ն» ամիս դադար մնալուց յետոյ, վերստին կսկսվի հրատարակվել առաջիկայ 1885 թուականի յուլիսից: Տարեկան գինն է 5 ռ., կիսամեայ 3 ռ.: 1885 թուականի տարեկան բաժանորդները սեպտեմբերին կտանան 30 տպագրական թերթից բաղկացած մի մեծահատոր զիրք գրական-գիտնական բովանդակութեամբ: Հասցէն. Тифлисъ. Ред. «Ардзаганкъ».

Խմբ.-հրատարակիչ Ա. Յովհաննիսեան:

ԱՐԵՒԵԼՔ

Օրագիր քաղաքական և ազգային: Տարեկան գինն է 56 ֆրանկ, կէս տարվան 28 ֆրանկ: Հասցէն. Վ. Պօլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քաղաքական, բանասիրական և ազգային լրագիրը առաջիկայ 1885 թուականին կհրատարակուի նոյն զիրքով և ճրագրով: Տարեկան գինը 10 ռ., կիսամեայ 5 ռ.: Հասցէն. Тифлисъ. Ред. „МЕГУ АЙАСТАНИ“.

Խմբ. Պ. Սիմեոնեան:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակվում շաբաթը երեք անգամ: Տարեկան գինն է երեսնամբ 1 ռ.: Հասցէն. Эривань. Тип. Теръ-Григорянь. Խմբ.-հրատ. Էմ. Տեր-Գրիգորեան:

ՆՈՐ-ԴԱՐ

Քաղաքական-գրականական ամենօրեայ թերթը առաջիկայ 1885 թուականին կհրատարակվի նոյն զիրքով և ճրագրով: Տարեկան գինն է 10 ռ., վեց ամսուան 6 ռ., հատով 5 կ. Հասցէն. Тифлисъ. Ред. „Норъ - Даръ“.

Խմբ.-հրատ. Սպանդար Սպանդարեան:

ԱՐԱՐԱՍ

Գրականական, պատմական, բանասիրական և ազգային ամսագիր. տարեկան գինը Ռուսիայում 4 ռ.: Հասցէն. Св. Эчмиадзинъ. Типогр. Комитетъ Сպարանական ժողով:

ԱՐԵՒԵԼԱՆ ՄԱՍՈՒՈՒ

ՀԱՆԳԻՍ ԱՄՍԵԱՑ

Տարեկան գինն է 4 մեծիտիէ արծաթ: Ռուսաբնակ հայերը կարող են բաժանորդ գրուել պ. Շահխերդեանի լրագրական գործակալութեան միջոցով Թիֆլիսում: Զմիւռնիա, Մեսրոպեան վարժարան: Խմբագիր-Տնօրէն Մ. Մամուրեան:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՎԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան գինն է 3 ռ. Հասցէն.

Ахалцыкъ. Редакция „Манкаваржаноцъ“.

Խմբագիր-հրատ. Խ. Ծայր. Վարդ. Ստեփանէ:

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԹԵՐԹԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1885 ԹՈՒԻ ՀԱՄԱՐ (ՈՐ Է 4 ՏԱՐԵՀՐՋԱՆ)

Առողջապահական թերթը հրատարակվում է Երեւանում, նախընթաց տարիների ծրագրով. տպագրվում է պ. Էմին Տեր-Պրիգորեանի տպարանում:

Տարեկան գինն է 3 մնթ. կանխի վճարելի:

Ստորագրվել կարելի է խմբագրատանը: Օտար քաղաքացիներ զինում են հետևեալ հասցեով. Вѣ з. Дриванъ. Вѣ Редакціо Журнала „Гигиенический листокъ“.


Խմբագիր-հրատարակիչ բժ. Լևոն Տիգրանեան:

ՉՈՒՆԱՐԱՆ ԵՒ ՏՊԱՐԱՆ

Օ. Օ. ՀԵՐԲԵԿ

ՄՈՍԿՎԱ, Չեռնիշևսկի Ճ. № 5.

ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ



ՉՈՒՆԵԼ հայերեն, վրացերեն, արաբերեն, պարսկերեն

և այլ տառեր.

ՓՈՐՏՊԵՆ ԳՈՆԱԳՆՆ ԴԱՐՆԵՐ

ԸՆԴՈՐՈՐԵԱԿԵԼ Հազուադիւտ դրքեր և ձեռագրներ,
այլ և ՏՊԱԳՐԵԼ ԳՐՔԵՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԵՐՈՊԱԿԱՆ

տառերով:



«Ազգային գրադարան»



NL0153089

